




# Ucom-ը մեկ ամսով հյուրընկալել է ռուսաստանյան «CBOSS» ընկերության ուսանողներին

Իրադարձային
5.10.2021 | 17:26 ***

Tweet





Ucom ընկերությունը մեկ ամսով հյուրընկալել է «CBOSS» ռուսաստանյան SS ընկերության ուսանողներ Անդրեյ Դուդնիկովին, Իգոր Զլոբինին, Դարյա Սիմակովային, Դմիտրի Սիդակին, Անատոլի Նոսովին, ովքեր հնարավորություն էին ստացել ընկղմվելու տարբեր ստորաբաժանումների բիզնես գործունեության մեջ: Այցի նպատակն էր այն ռուս խոստումնալից երիտասարդների մասնագիտական զարգացումը, որոնք Անդրեյ Մորոզովի նորարարական նախաձեռնության շնորհիվ հավաքագրվել են «Ստեղծարար բանականություն» մրցույթի ուսանողական դասընթացներին մասնակցելու արդյունքում:

«Սա փորձի փոխանակման և համատեղ աշխատանքի շատ լավ հնարավորություն է թե՛ մեր թիմի, և թե՛ մեր գործընկերոջ երիտասարդ տաղանդների համար: Նշեմ, որ մեր ղեկավարներն արձանագրել են Ucom ժամանած ուսանողների ընկալունակության և կրթվելու բարձր մակարդակը, և մենք կդիտարկենք նման դասընթացների մասնակցելու հնարավորությունը նաև հայ մասնագետների համար», - ասել է Ucom ընկերության գլխավոր տնօրեն Արա Խաչատրյանը:



«Ստեղծարար բանականություն մրցույթի ուսանողական դասընթացները բացահայտում են ռուս երիտասարդության ներուժը, և մենք հետաքրքրությամբ նմանօրինակ միջոցառում Հայաստանում էլ կկազմակերպեինք: Ես վստահ եմ, որ այստեղ կկարողանայինք մեր տեխնոլոգիաների միջոցով գտնել խոստումնալից երիտասարդների, որոնք հնարավորություն կստանային վստահորեն և արագ մեկնարկել իրենց մասնագիտական ուղին ինչպես Ucom-ում, այնպես էլ այլ ընկերություններում: Սա նման է սոցիալական վերելակի կամ նույնիսկ ուղղաթիռի: Արդեն հիմա երիտասարդները կարող են իրենց նախնական հայտերը ներկայացնել առցանց՝ Դասընթացների «10в» կոչվող էջում (սա ռուսերեն «գուգլեք»): Որքան շատ հայտեր ստանանք հիմա, այնքան շուտ մենք Ucom-ի հետ համատեղ նմանօրինակ մի միջոցառում կկազմակերպենք Հայաստանում », - նշել է «CBOSS» ընկերության նախագահ Անդրեյ Մոռոզովը:

«CBOSS» ընկերության ֆինանսական բաժինը ներկայացնող ուսնակ Իգոր Զլոբինը պատմել է, որ Ucom-ում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ուսանել է տարբեր ստորաբաժանումներում՝ հաճախորդների սպասարկման, բիլինգի թիմերում, և նույնիսկ կարողացել է աշխատել  գովազդային բաժնում. «Ucom-ում աշխատակիցները բարեհամբույր են, բաց, նրանց հետ հաղորդակցվելը շատ հեշտ է, այստեղ աշխատանքն այնքան պարզ է, որ «վերադաս-ստորադաս» տարաբաժանումը չի զգացվում»:

«CBOSS»-ը հեռահաղորդակցության ոլորտում աշխատող ընկերություններին տրամադրում է բիլինգային լուծումներ, որոնք մասնագետների կարծիքով՝ բավականին գործառնական են, ճկուն, ունեն լայն կիրառություն: Բիլինգային համակարգն ավտոմատացված է, հաշվառում է բաժանորդին մատուցված ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը, հաշվարկում է բաժանորդների փոխանցումներն ու վճարումները և տալիս է ընդհանրացված, այդ թվում՝ հաշվետվությունների համար պահանջվող արդյունքներ:

**Նյութի աղբյուր՝** www.armenpress.am

Հավանեցի՞ք նյութը, կիսվեք ընկերների հետ:



Կարող եք կիսվել Ձեր տպավորությամբ

0 0 0 0 0 0






## ՆՄԱՆԱՏԻՊ ՆՅՈՒԹԵՐ



Ինդոնեզիայում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով զոհերի թիվը հասել է 78...



Աշոցքի երեք գյուղեր կգազաֆիկացվեն սուբվենցիոն ծրագրերով



Կոտայքի մարզում անհայտ մակնիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել հետիոտնի...

ALLnews.am
լրատվական

ՀԵՌ. + (374) 55 34-44-83
+ (1) 818 434 0463

EMAIL: admin@allnewsonline.am

Գլխավոր էջ Կապ մեզ հետ

E-mail Բաժանորդագրվել

powered by Comp-Web Cervice

© 2019 https://allnewsonline.am Բոլոր իրավունքները պաշտպանված են: Մեջբերումներ անելիս հղումը https://allnewsonline.am-ին պարտադիր է: Կայքում արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն խմբագրության տեսակետի հետ:

BY FEEDBURNER